ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

ԼԵՎՈՆ ՉԵՔՐԻՅԱՆ (Վենեսիկ)

Այս զեկույցին նպատակը չէ ընդհանուր վիճարկում մը ցեղասպանության գաղափարին՝ ինքն իր մեջ նկատված։ Կընդունինք Միացյալ ազգերու համաձայնագրին տված սահմանումը, ըստ որուն «ցեղասպանություն» եզրով կըհասկցվին կարգ մը գործեր, ինչպես՝ «սպաննիլ, ֆիզիքական լուրջ վնաս պատճառիլ, դիտումնավոր կերպով կյանքի այնպիսի պայմաններ պարտադրել՝ որոնք ֆիզիքական ընաջնջումի առաջնորդեն, պարտադրել ծննդաբերությունը կանխարգելող միջոցառումներ, մանուկները բռնի տեղափոխել» «մասամբ կամ ամբողջապես բնաջնջելու նպատակով ազգային, էթնիկ, ցեղային կամ կրոնական խմբավորում մը՝ իբր այդ»[1]։

Այս զեկույցին նպատակը չէ նաև հայոց ցեղասպանության իրողությամբ զբաղիլ։ Նախ՝ որովհետև պատմական հետազոտությունը գլխավոր ուղղությունը կազմած է հայոց ցեղասպանության ուսումնասիրություններուն մեջ և այսօր գոյություն ունի գիտական բազմածավալ գրականություն մը պատմության վերաբերյալ։ Երկրորդ՝ սա պատճառով, որ եթե հայոց սպանդը ցեղասպանության ակներև պարագա մը չէ, մարդ կփորձի հարց տալ՝ թե ի՞նչ է ուրեմն ցեղասպանությունը։ Երրորդ՝ որովհետև կխորհինք, թե գրեթե հարգանքի պակաս մըն է մեռյալներու հիշատակին և վիրավորիչ՝ վերապրողներուն համար, ճշմարտության հարց գնել այդպիսի ողբերգության մը մասին։ Կկարծենք, թե հայոց ցեղասպանության նկատմամբ պատմական հետախուզությունը կրնա մարդկային իմաստ մը ունենալ միայն իբր անդրադարձ ուսումնասիրություն՝ դեպքերու պատմական շրջածիրին ու շարժառիթներուն, անոնց ընկերային, տնտեսական, կրոնական և քաղաքական ենթահողին, միջազգային քաղաքականության կնճիռներուն և այլն։ Մեկ խոսքով, իբր հետազոտություն մը՝ որ ուղղված է եղելության պատմական իմացությունը մշակելու։ Կասկած չկա թե այս հավաստումը չի նշանակիր երբեք, թե շարունակելու չէ պատմական փաստագրերու մեկտեղման և ուսումնասիրության գործը։ Նախ՝ քանի որ միշտ ավելի լույս կրնան սփռել հետազոտության վերոհիշյալ բեռներուն վրա, երկրորդ՝ քանի որ հայոց ցեղասպանության ճանաչումը, դժբախտաբար, դիմագրավելու անհրաժեշտության ենթակա է պատմության ժխտումի ու եղծարարության ամենեն տմարդի պարագաներեն մեջը։

Այս հիմնական հստակումներեն ետք, կփափաքինք ավելցնել, թե ցեղասպանության գաղափարի սահմանումին մեջ մեր համակրանքը կհակի առավելաբար այն «հումանիստական սահմանում»-ին, զոր կու տա Իսրայել Ու. Չարնի իր մեկ արժեքավոր հոդվածում՝ նվիրված ցեղասպանության և մարդկային իրավունքների հարցերին[2]։ Սույն գրության մեջ, Չարնի դիտել կու-

---

* *Զեկույցում կարդացված «Հայերի ցեղասպանություն. պատմություն, տեսություն, քաղաքական պատասխանատվություն» միջազգային գիտաժողովում (1990 թ. ապրիլ, Երևան)։*

1 *Ամբողջական բնագիրը տե՛ս* Social Science Record, The Journal of the New York State Council for the Social Studies. *հ. 24, պրակ 2, աշուն 1987.* Genocide. Essays, Approaches, Resources:

2 *Ցեղասպանության տիպաբանական մերձեցումի մը համար տե՛ս* K. Jonassohn and

տա, թե «Օրինական նկատառումներու և քաղաքական ճնշումներու զուգադրության մը հետևանքով ցեղասպանության դեմ Միացյալ ազգերու Ներկա Համաձայնագիրը շեշտը կդնե ազգային, էթնիկ, ցեղային կամ կրոնական որևէ կազմավորումի մը ինքնությունը բնաջնջելու կամավոր ճիգին վրա»։ Ասոր արդյունքն այն է, որ իբր ցեղասպանություն կընորոշվին մշակութային որոշ միջոցառումներ, ինչպես լեզվի մը գործածության արգելքը կամ համակրոն անձերու միջև ամուսնություններու կանխարգելումը, մինչ ընդհակառակն վարչաձևի մը ընդդիմադիրներու միլիոններով զանգվածային ջարդը ցեղասպանություն չի կազմեր, քանի որ ցեղասպանության օրինական սահմանումեն դուրս թողված է քաղաքական շարժառիթներով գործված ոճիրը։ Ուստի Չոքնի կառաջարկե իր հումանիստական սահմանումը հետևյալ կերպով. «Ըստ իս խնդրո առարկա է կամավոր սպանությունը մարդկային էակներու խմբավորումի մը, հասարակաց որևէ ինքնության մը շարժառիթով, ըլլա ատիկա ազգային, էթնիկ, ցեղային, կրոնական, քաղաքական, աշխարհագրական, գաղափարախոսական»։

Կրնանք հիմա ճշտել ներկա զեկույցին նյութը։ Մեր գլխավոր առաջադրանքն է իմացողական ուրվագրումի փորձ մը հայոց ցեղասպանության բնույթին, նկատված իր ուրույն ինքնությանը մեջ։ Կխորհինք թե լոկ ընդհանուր սահմանումի մը տարրողությամբ կատարված քննություն մը բավական չէ, ըստ ինքյան, հարթելու խորագույն իմացողության մը ուղին այդպիսի համազանգված և բացարձակ գործի մը նկատմամբ, որպիսին է ցեղասպանությունը, որ բովանդակ ժողովուրդի մը համար և ամենեն արմատական կերպով առաջ կբերե լինելու և չլինելու հարցը։ Անհրաժեշտ է, նման պարագաներու մեջ, լուրջ ճիգ մը կատարել նշմարելու համար յուրաքանչյուր իրողության ուրույն հանգամանքը, յուրահատուկ ինքնությունը։ Միայն այս կերպով կրնանք իսկապես մարդկային մերձեցում մը ունենալ գերազանցորեն մարդկային իրողության մը, որ է ցեղասպանությունը, մարդկային՝ իր բացառիկ եղերականության մեջ։

Ահա թե ինչու հարցին մեր մերձեցման եղանակը իբրև պատմազանցական կընորոշինք, պատմազանցությունը նկատելով իբր որոնումը պատմության խորագույն մեկ իմաստին, ենթադրելով անշուշտ, թե կարելի է խոսել իրականության և կյանքի իմաստի մը մասին, և ոչ թե նայել անոնց իբր բոլորովին իմաստե զուրկ երևույթներ։ Նման վարկածի մը փորձությունը մեծ է անշուշտ, ի տես ցեղասպանության մը ողբերգության։ Բայց մենք, մեր այս առաջին քայլին իսկ, կընդունինք իմաստի մը գոյությունը, թեպետև մթին և խորհրդավոր, դժվարագնին և գրեթե անհեթեթության սահմանագծին վրա։ Այլ խոսքով՝ կընդունինք հնարավորությունը մտածելու կամ վերամտածելու պատմությունը, նույնիսկ եթե ատիկա աղետի նշանակով ներկայանա մեր աչքերուն՝ ոչ միայն իր հենքը հյուսող դեպքերուն պատճառական օղակաարմանը մեջ, այլ նախ և հատկապես՝ իր առնչություններով մարդուս և մարդկության գոյությանն ու ճակատագրին։ Ուրեմն, պիտի ջանանք փորձել հասկնալ, թե ինչ նշանակած է ցեղասպանությունը հայ ժողովուրդին համար, ոչ սոսկ մարդկային կյանքի երևութական մեկ դիտանկյունեն՝ իր տնտեսական, գեղարվեստական, մշակութային, ընկերային, հոգեբանական, կրոնական, քաղաքական ներփակումներով, այլ պատմազանցական դիտանկյունե մը, այսինքն՝ նկատելով մարդկային կյանքը իր գոյութենական արմատներով, լինելու և իմաստի հարթակներուն վրա։ Այսպես հասկցված՝ պատմազանցությունը մեզ կառաջնորդե բնազանցության, եթե բնազանցություն ըսելով կհասկնանք որոնումը իրականության ավելի խոր և վերջնական մեկ իմաստին։

F. Chalk. Typologies of Genocide.—In: The Book of the International Conference on the Holocaust and Genocide Թել-Ավիվ, 20—24 հունիս, 1982։ Այս առթիվ միայն Ա. գիրքը մենք հաջողեցանք տեսնել՝ The Conference Program and Crisis.

Առաջին կետը, որու վրա պիտի ուզևինք ուշադրություն հրավիրել, հունարեն գենոս բառի նշանակությունն է, որմե կազմված է եվրոպական լեզուներու գենոցիդ բառը, և որ հայերենի վերածված է «ցեղասպանություն» համապատասխանով։ Ուրեմն, հայերենի սույն բարդության պարագային, «ցեղ» բառի իմաստային այլևայլ ուարբերակներեն մեզ շահագրգռողը պիտի ըլլա այն, որ կհամապատասխանե հունարեն գենոս-ի իմաստին կամ իմաստներուն։ Գենոսի նախնական նշանակությունն է՝ ծնունդ, սերունդ, զարմ, սեռ, ցեղ։ Կասկած չկա, թե բառը պահած է գենոցիդ-ի օրինական սահմանումին մեջ իր այս հիմնական նշանակությունը։ Արդարև, այդ սահմանումին գլխավոր հատկանիշ այն է, որ գենոցիդը անձերու խումբի մը դեմ գործված արարք մըն է իրենց պատկանելիությանը պատճառով, ազգի մը, ցեղի մը, կրոնքի մը, կամ նաև գաղափարի մը ըստ Ջարնիի հումանիստական սահմանումին։ Արդ, խմբավորում մը ուրիշ բան չէ, բայց եթե մարդկային սերունդ մը, որոշ ազգի մը, ցեղի մը, կրոնքի մը կամ այլ որևէ պատկանելիությամբ։

Այն հանգամանքը, թե գենոցիդը նախ և առաջ մարդկային խմբավորումի մը, այսինքն սերունդի մը կվերաբերի, զիրենք խորապես բնորոշող հասարակաց և զատորոշիչ հատկանիշի մը պատճառով, արդեն իր հղացքին մեջ եսկ կներփակե, թե ցեղասպանությունը ո՛չ ամբողջական բնաջնջումը և որով պարումը կնշանակե ցեղի մը, ազգի մը, կրոնական խմբավորումի մը, ոչ ալ միակ բան մը կնշանակե ժողովուրդի մը կամ մարդկային ուրիշ որևէ խմբավորումի մը կյանքին մեջ, քանի որ ցեղասպանության արարքներ կրնան գործադրվիլ միևնույն ժողովուրդին կամ միևնույն խմբավորումին այլևայլ սերունդներուն վրա։

Ակնարկ մը պատմական ցեղասպանություններուն պիտի օգնե, որ կարենանք այս դժբախտ իրականության մեջ տիպարանային զանազան բնորդներ առանձնացնել։

Ա. Առաջին զանազանություն մը պետք է վերաբերի այն հատկանիշներուն բնորոշման, որոնց համար մարդկային խմբավորում մը բնաջնջումի կենթարկվի։ Կարելի է առանձնացնել հատկանիշերու ամբողջ շարք մը, որոնք կառնչին խումբի մը անդամներուն միջև գոյությունն ունեցող արյունակցական կապերուն. այլ խոսքով՝ ամեն տեսակ կապ, որ կրնա ներառնվիլ հետևյալ գաղափարներուն կամ նմաններու մեջ՝ ցեղ, ցեղախումբ, կլան, էթնիկ խմբավորում, ազգ։

Հատկանիշներու երկրորդ հիմնական շարք մը, ինչպես պատմությունեն երևան կուգա, այն է որ մարդկային կյանքի մեջ ուժեղ ազդեցություն բանեցնող համոզումներուն կառնչի։ Ասոնք կվերածվին, հուսկ, կրոնական կամ բարոյական համոզումներուն։ Ասոնց պետք է ավելցնենք, եթե կնդունենք Ջարնիի հումանիստական սահմանումը, քաղաքական և գաղափարախոսական համոզումները։

Բ. Արենակցական կարգի հատկանիշերը կպարտադրեն անդրադառնալ զանազանություններ և մասնավորումներ.

1. Նկատի առնվելիք առաջին կետերեն մեկն է՝ բնաջնջումի ծրագրին ենթարկված խմբավորման հարաբերությունը այն երկրին հետ, ուր այդ ծրագիրը կիրագործվի։ Եղած են ժողովուրդներու ջարդեր, նույնինքն իրենց հողին վրա, բուն իսկ այն երկրին մեջ, որ եղած է օրրանը իրենց էթնիկ ինքնության, խանձարուրքը՝ իրենց բնիկ մշակույթին, իրենց բնաշխարհը։ Սակայն եղած են նաև ջարդեր՝ որոնք ի գործ դրված են գաղթավայրերու մեջ ապրող ժողովուրդներու վրա, որդեգրության երկիրներու մեջ, երկիրներ՝ որոնք սկզբնաբար հյուրընկալու հանդիսացած են։

2. Նկատի առնվելիք ուրիշ կետ մը՝ սպանդին իրողական «ամբողջականություն»-ն է։ Եղած են պարագաներ, ուր բովանդակ ցեղախումբեր կամ էթնիկ խմբավորումներ անհետացած են պատմության բեմեն կամ, գոնե,

կորսնցուցած՝ իրենց ինքնությունը։ Օրինակ՝ հերերոներու պարագան Ափրիկեի մեջ։

3. Այս կետին՝ երևան կուգա վերապրողներու հարցը։ Ի՞նչ եղած է կամ է ցեղասպանության հետ ներշփումը, վերապրողներուն։ Ոճիրը զիրենք առաջնորդած է թմրությա՞ն, թե ընդհակառակն, նոր բան մը ծնունդ առած է իրենց մեջ՝ մեռնող ցորենահատիկեն։ Հայ և հրեա ժողովուրդներու պարագաները անտարակույս այս երկրորդ վարկածի ծիրին մեջ կմտնին, թեև տարբեր ուղիներե և տարբեր աստիճաններով։ Հարակարծորեն, վերապրողներու գոյությունը կացության եղերականությունը դեռ ավելի կշեշտե, քանի որ անոնց հավաքական հիշողության մեջ ցեղասպանությունը կշարունակե ապրիլ իբր կոտտացող վերք մը։

Մեր կարծիքով, հարցը լոկ անմիջական վերապրողներու կամ ասոնց զավակներու մասին չէ, ոչ ալ սոսկ հոգեբանական խոովքի մը մասին է։ «Հոգեբանապաշտային» այս հեռանկարը[3] ցեղասպանության հիշողության վերլուծումին մեջ անկասկած վավեր է, բայց անբավարար՝ կկարծենք՝ հայտնաբերելու անոր խորագույն իմաստը և իրավ ներշփումը հավաքականության կյանքին հետ։ Այս մասին՝ քիչ վերջ։

4. Վերապրողներու հարցը մեզ կառաջնորդե նկատելու ինչ որ ամենեն կեդրոնական տվյալներեն մեկն է, որ ցեղասպանության կրնա վիճակիլ ժողովուրդի մը կյանքին մեջ՝ միակությունը, այսինքն՝ ցեղասպանության արմատական բնույթը։ Ասիկա շատ կարևոր հատկանիշ մըն է՝ որ ուշադրությամբ զանազանվելու է ջարդի գործադրության իրողական ամբողջականութենեն։ Այս վերջինս կնշանակե բացարձակ վերջ մը, բայց միաժամանակ կկնքե այդ վախճանը՝ զայն զետեղելով պատմության դիվաններուն մեջ, այլ ոչ՝ ապրող հասարակության մը հիշողության մեջ, որ զայն զգա իբր իր սեպհական ողբերգությունը։ Ցեղասպանության այս վերապրումն է հավաքական հիշողության մը մեջ, որ կկազմե գուցե անոր ամենեն ահավոր և սահմռկեցուցիչ երևույթը։ Իբր օրինակ նման արմատական ցեղասպանություններու՝ կրնանք նշել հայերու և հրեաներու պարագաները։

Անդրագոյն տարր մը, որ կնպաստե նույնիսկ ավելի զկծեցուցիչ դարձնելու, եթե կարելի է այսպես արտահայտվիլ, փորձընկալումը այդ հավաքական մահվան, հավաքական ինքնագիտակցության զարգացման մակարդակն է։ Ասիկա անշուշտ շատ բարձր աստիճանի մը վրա է հրեաներու և հայերու մոտ, որոնք՝ իրենց վրդովակոծ պատմության ընդմեջեն կրցած են զարգացնել ինքնապահպանման և վերապրումի բացառիկ մեքենականություններ ըլլա իրենց երկրին, ըլլա արտերկրի մեջ, թե՛ գաղութային և թե՛ սփյուռքային իրավիճակներու մեջ[4]։

Հարցերը, զոր արծարծեցինք վերջին չորս պարբերություններու ընթացքին, հատկապես արենակցական կապերու վերաբերող ցեղասպանություններուն առնչությամբ, իրենց կիրարկումը կրնան ունենալ նախ՝ կրոնական կամ քաղաքական համոզումներու պատճառով գործած նախճիրներու պարագային, երբ այդ համոզումները կպատկանին փոքր կամ սահմանափակ տարածությամբ խումբերու՝ որոնք կրնան յուրացվիլ կամ նույնացվիլ էթնիկ,

---

3 Վերապրողներու սերունդներուն հետ ցեղասպանության հոգեբանական ներշփումի, հատկապես հայոց ցեղասպանության մասին տե՛ս L. Boyajian and H. Grigorian. Psychological Sequelae of the Armenian Genocide.—In: The Armenian Genocide in Perspective. ed. by R. Hovannisian. New Jersey, 1987, p. 177—185.

4 Այս երկու հղացքներու զանազանության և «գաղութի» հղացքին մասին անդրագույն զանազանության մը համար տե՛ս B. L. Zekiyan. Le croisements des cultures dans les regions limitrophes de Géorgie, d'Arménie et de Byzance.—Annali di Ca' Foscari (Serie Orientale 17), XXV, 3, 1986, p. 91, ann. 13.

ազգային կամ ցեղային խմբավորումներու։ Արդարև, այդ նկատողությունները կրնան իմաստ մը ներկայացնել՝ միայն երբ հարցը կվերաբերի խմբավորումներու կամ հասարակություններու, որոնք ի կարողության անսահմանափակ չեն, ինչպես են ընդհակառակն պատմության «մեծ կրոնքներ» ու խմբավորումները[5]։

Այս ընդհանուր ուրվագրումներու հիման վրա փորձենք հիմա հայոց ցեղասպանության խորագույն մեկ իմացումը՝ իր ներքին ներուժականություններուն մեջ։ Այլ բառերով՝ փորձենք հասկնալ, թե ի՞նչ նշանակած է և կնշանակե, հուսկ, ցեղասպանությունը վերապրող հայ ժողովուրդին համար։

Բավական խոսված է հրեաներու ցեղասպանության «միակության» մասին՝ իբր «Ողջակիզում»։ Կասկած չկա, թե ան եղած է ու կմնա իբր միակ բան մը ոչ միայն հրեա ժողովուրդի բազմահազարամյա պատմության, այլ ընդհանրապես մարդկային զարմի պատմության վերաբերմամբ։ Ասով հանդերձ, մեր համոզումն այն է, ինչպես հստակորեն կերևի ցարդ ըսվածներեն, թե ամեն ցեղասպանություն ունի յուրահատուկ բան մը, բան մը՝ հատկապես ահավոր և սահմռկեցուցիչ, տմարդության անկրկնելի մարմնավորում մը՝ իր հղացումին, գործադրության, հիշատակին մեջ, քանի որ ամեն ցեղասպանություն մարդկային ողբերգություն մըն է, մանավանդ թե Ողբերգությունը ինքնին։ Եվ ոչ մեկ բան՝ որ մարդկային է, որ մարդուն հոգեկանության կպատկանի, լավին կամ գեշին մեջ, կրնա շարքային արտաբերություն մը ունենալ։ Ուրեմն, պիտի զարտուղենք Եհուդա Բաուերի հետևյալ հավաստումեն, թե «Հայոց ողբերգությունը կամ Հարավային Ամերիկայի մեջ էթնիկ խումբերու բնաջնջումը միջանկյալ տեղ մը կզետեղվին ընդմեջ «ցեղասպանություն» և Ողջակիզում եզրերուն[6]։ Մեր կարծիքով, եթե որևիցե եզր կընդունվի իբր հատկապես արտահայտիչ՝ տվյալ իրականության մը,—ինչպես «Ողջակիզում» եզրը՝ արտահայտելու համար հրեաներու ցեղասպանության ներքին բնույթը,— այն ատեն նախընտրելի է կամ ուրիշ հղացքներու դիմել բնորոշելու համար տարբեր իրականություններ, և կամ կիրարկել «հանգիտության» դասական ստորոգումը, որպեսզի խուսափինք լեզվական նման խեղաթյուրումներե, ինչպիսին է Բաուերի նման քանակական եզրերով խոսիլ արտակարգորեն փափուկ մարդկային իրականություններու մասին։

Մյուս կողմե, իրողություն է, որ ցեղասպանության շուրջ իրավաբանական, մարդաբանական, ընկերաբանական, հոգեբանական, իմաստասիրական մտածողությունը, ըստ հիմնականին, մշակված է գլխավորապես հրեա ծագումով ուսումնասերներու կողմե՝ իրենց ժողովուրդին ողբերգության վերաբերմամբ։ Ուստի բաղձալի պիտի ըլլար, որ նման ողբերգություններու այլ պարագաներու նկատմամբ տարբեր ծագումներով գիտնականներ առավելագույն ճիգ մը ցուցաբերեն զարգացնելու համար այդ պարագաներուն ավելի հանգամանորեն պատշաճող մեկնաբանական այլ ստորոգումներ։ Կամ, գոնե, ինչպես արդեն նշեցինք, առավելագույն ուշադրություն մը հատկացնեն հանգիտության ստորոգության։

Ինչ որ իսկույն ակնթարթ կդառնա հայոց եղեռնի պարագային, ժողովուրդի մը ամբողջական արմատախլումն է իր քնաշխարհեն, իր պապենական երկրեն, ուր իր ինքնությունը, լեզուն, մշակույթն ու տաղանդը ձևավորվեր և արտահայտվեր էին շուրջ երեք հազարամյակներու պատմության մը կենդանի հոլովույթին ընդմեջեն։

Այս արմատախլումին ամենեն հատկանշիչ հանգամանքը այն է, մեր կարծիքով, որ ատիկա սոսկ իրողական կացություն մը չէ, այլ է փաստա-

---

[5] Այս եզրը կկիրարկենք նկարագրական-երևութաբանական իմաստով մը. հմմտ. H. Von Glasenapp. Die fünf grossen Religionen, 2, Düsseldorf, 1951—1952.

[6] Y. Bauer. Between Holocaust and Genocide.—International Conference on Holocaust and Genocide.

ցիորեն իրավական և բացարձակապես բռնի տարագրում մը երկրեն[7], մշտապես նորոգվող աքսորի գոյավիճակ մը՝ որքան ատեն որ բնաշխարհին պատկերը ջնջված չէ ժողովուրդին հավաքական հիշողութենեն։ Այնպես կթվի, թե Հայոց եղեռնը ստուգիվ միակ մը կներկայացնե այս տեսակետեն։

Անշուշտ, պատմության ընթացքին կհանդիպինք բազմաթիվ պարագաներու երկիր մը պարպելու կամ «մաքրելու» իր հնագույն բնակիչներեն։ Պարզապես նշելու համար երկու հանրածանոթ պարագաներ, հիշենք ինչ որ կատարված է Հյուսիսային Ամերիկայի և Ավստրալիո բնիկներուն վրա։ Եվ սակայն այս դժբախտ ժողովուրդներուն վերապրած սակավաթիվ շառավիղները կրցած են շարունակել ապրիլ իրենց հողերուն վրա, իրենց պապերու հողերուն վրա, կրցած են շարունակել մնուցանել իրենց հավաքական մտապատկերը բանով մը՝ որ իրենցմե բոլորովին ուծացած չէր։ Տեսականորեն, այսպես էր նաև հրեա ժողովուրդի պարագան իրենց պատմության առաջին և գուցե ամենեն արմատական ցեղասպանության վաղորդայնին՝ որ ծանոթ է ընդհանրապես իբրև «Երուսաղեմի կործանումը»։

Ցեղասպանութենեն վերապրող հայերուն համար, ընդհակառակն, բնաշխարհը կներկայանա իբր սահմանագիծը արմատական անկարելիության մը, իբր հորիզոնը բանի մը, որ առկայապես անխորհելի է, և կամ կրնա միայն երևակայվիլ՝ իբր պատմության պատրանք կամ իբր պատրանքի դյուցազնավեպ։ Հոգեբանական նման դրություն մը կառաջնորդե վերապրողներու հավաքական մտապատկերը տեսնելու բնաշխարհը՝ իբր Բևեռը բացարձակ դրականության։

Այս պատրողական դրականության հակադրությամբ՝ բնաշխարհե զըրկումն ալ կներկայանա ուրեմն, իբր արմատական ժխտականություն, իբր Հակաբևեռը, իբր ազգային միակ «դժբախտությունը»։ Ուստի մտասևեռումը՝ ըլլալու «դժբախտ ժողովուրդ», զարհուրանքը՝ մերձակա բնաջնջումի մը, որոնք այնքան մասնահատուկ են հայ հավաքական հոգեբանության, հատկապես Մեծ եղեռնեն ասդին։

Այս հակադրությունը ևս ավելի կսկծելի կդառնա, այնու որ Հայաստանի «մյութոս»-ը— «միթոս»՝ բառին մարդաբանական-կառուցային առումով— իբր Եդեմ, իբր երկրավոր դրախտ կամ առնվազն իբր օրրանը ջրհեղեղեն վերապրած նոր մարդկության, խոր արմատներ ունի հայկական ինքնապատկերացման մեջ, մասնավորապես վերջին դարերուս ընթացքին՝ երբ բազմադարյան օտար լուծի ենթակա հայ ժողովուրդին ինքնապահպանման հոգեբանական մեքենականությունները այդ և նման ինքնապատկերացումներով և այլ միջոցներով ավելի զորացան ու շեշտվեցան[8]։

Երկրեն զրկումը, թեպետև կրնա զգացական կամ ռոմանտիկ շատ բան ունենալ իր արտահայտության կերպերուն մեջ, ասով հանդերձ հղի է հետևանքներով՝ որոնք իրովի ժողովուրդի մը ինքնության ամենեն թաքուն լարերուն կդպչին։ Այդ զրկումը կկազմե թանձրացյալ տարածքը՝ ուր կապրի, կզգա և կխորհի հայուն ինքնագիտակցությունը, և որ պիտի շարունակե իր

---

7 Արդարև, Թրքական հանրապետությունը հաջորդաբար ու պաշտոնապես մերժած է Մեծ եղեռնի վերապրողներուն՝ իրավունքը իրենց ընիկ հողին վրա վերադառնալու և ապրելու և որևէ կերպով տեր կանգնելու իրենցմե կորզված կալվածներուն կամ սեպհականության իրավունք պահանջելու։ Նաև այս պատճառին համար, կխորհինք, թե կարելի չէ ստորագրել այն դրույթը՝ ըստ որուն Թրքական հանրապետությունը ազատ արձակվելու է Հայոց ցեղասպանության նկատմամբ որևէ պատասխանատվութենե, ինչպես կրնե, զոր օրինակ Եվրոպայի խորհրդարանը։ Նման դրույթ մը, մեր կարծիքով, կխղե ժողովուրդներու և պետություններու կյանքին մեջ պատմական շարունակականության ամեն կապ և գուցե կբանա պատմության առջև պատասխանատվությունե շատ հայտնի և դյուրին խուսափումներու։

8 Հայաստանի հողին այս դրախտային, վերաստեղծիչ տեսիլը իր առաջին ուժգնագույն բանաձևումը հ. Միքայել Չամչյանով գտած կթվի։

այդ դերը տակավին երկար ժամանակ, քանի որ նման վերքեր մեկ օրեն մյուսը չեն սպիանալ։ Թերևս ատիկա պիտի կազմե նախ, որևէ ձևով, հայ ինքնության մնայուն մեկ տարածքը[9]։

Իրապես, երկրին կորուստը նշանակած է սկզբնաբար բովանդակ աշխարհի մը հեղակարծ, աղետային ընկլուզումը[10]։ Աշխարհ մը՝ արժեքներու, ավանդություններու, հուշարձաններու, սերերու, հուշերու, այն ամեն բանի, որ կկազմե հոգեկան ու նյութական ոլորտը, ուր ժողովուրդի մը ինքնությունը ինքզինք կիրականացնե և կցոլացնե։ Այս կորուստը կնշանակե, ուրեմն, անընդհատ կոչ մը վերապրողներուն համար։ Իրենց ներկա գոյությունը՝ իբր հայ՝ իմաստ մը կունենա այնու որ կդառնա լարվածություն մը վերագտնելու կորսված աշխարհը, զայն վերստին ապրեցնելու, վերամեկտեղելու անոր հատուկենտ, ցիրուցան, քանդված իրականությունը նոր համադրության մը, նոր տարածքի մը, ապրող նոր պատկերի մը մեջ։

Ցեղասպանությունը չէ միայն արմատական ժխտականության մը բևեռը, այլ՝ իբր այդ՝ է նախ միանգամայն հակաբևեռը, հակապատկերը, առանց որու վերապրող հայերը ոչ իսկ կրնան տիրանալ իրենց ներկա գոյությանը։ Կա անխուսափելի հարակցություն մը այս գոյության և ցեղասպանության միջև, ոչ սոսկ այն ընդհանուր իմաստով՝ որով մահը և նոխազները և զոհարերումը շատ հաճախ աղբյուր են նորող կենդանության—ինչպես վստահարար պատահած է թե՛ հրեաներու և թե՛ հայերու պարագային,—բայց նախ շատ ավելի մասնահատուկ իմաստով մը՝ ըստ որուն կորսված բնաշխարհին պատկերը հիմնական մեկ տարրը կկազմե հայ ինքնագիտակցության։

Այս կետին է որ կսկսին բանիլ ցեղասպանության և կյանքի հակադրությունեն ծագող բազմարժողանի ներուժականությունները, որոնք արգելք կհանդիսանան առաջինի արմատական ժխտականության բացարձակ ժխտականության մը վերածումին։ Արմատական ժխտականությունն՝ քանի որ աղետ մը կնշանակե. ոչ բացարձակ՝ քանի որ երևան կբերե գեռակշռորեն տրամասական բնույթ մը, որ կյանքով բարախուն ընտրություններու օղակավոր հակազդեցություններու շարք մը կշղթայաղերծե։

Կխորհինք թե տրամասային գաղափարագիծը, ըլլա իր հեգելյան կամ մարքսյան, ըլլա գոյութենապաշտ կամ այլ ձևերով անկախաբար յուրաքանչյուրին փիլիսոփայական տեսություններեն կամ աշխարհայացքեն, կրնա ընձեռել մեկնաբանական շատ հարմար բանալի մը՝ վերլուծելու համար զըրկում-տիրացում, փարում-լարվածություն հառարևությունները հայ հավաքական մտապատկերին մեջ, ըստ այնմ որ ան ձևավորված է իբր հետևանք՝ ցեղասպանության և վերապրումի, բնաշխարհի և աքսորի միջև գտնվելու իր հարակարծային դրության։

Այդ տարբեր պահերուն դիրքը փոխադարձաբար փոխանակելի կհանդիսանա, ըստ հեռանկարին՝ որու ծիրին մեջ կդիտվի իրենց գործառույթը։ Ասպես, բնաշխարհի կորուստը սիտի ներկայանա իբր «դրության» պահը, մինչ բնաշխարհի տիրացումը պիտի ներկայացնե «հակադրության»-ը, պատմական եղելության հարթակին վրա։ Իրողական գործառույթներու և արժեքներու այս պատմական հակաշրջումը կկազմե բուն իսկ էությունը հայկական Ողբերգության։

Բայց, հոգեբանական և հասարակական ներուժականություններու հար-

---

9 Նման վարկած մը առաջարկված է նախ Փ. Նոյտեի կողմե, թեև տարբեր դիտանկյունե մը, իր ողբումի կամ ողջի մշակման տեսության առնչությամբ, Identität in der Fremde՝ խորագրված գիտահավաքին իր ելույթին մեջ (Բոխում, հունիս 1987)։ Նոյտե կխոսի «անցյալ»-ի մը մասին՝ «որ երբեք պիտի չմոռացվի»։

10 Հայոց ցեղասպանության «աղետային» տեսություն մը մշակված էր Կարպիս Գորդյանի կողմե Բոխումի վերոհիշյալ ժողովին (ծան. 9) իր ելույթին մեջ, հետևյալ վերնագրով՝ „Ist die Identität nach der Katastrophe möglich?"

թակին վրայ, որոնց կհենու հայուն վերապրումը, ուրիշ հակաշրջում մը եւ տեղի կունենայ—հակաշրջումին հակաշրջումը—, ուր «դրոյթը» բնաշխարհին երեւակայովի վերստացումը եւ վերակառուցումն է։ Այս երկրորդ աստիճանի կամ կրկնակի հակաշրջումը, որ կբացատրէ թէ ինչպէս կրնան կյանքով բաբախուն ներուժականութիւններ հառաջագայիլ արմատական ժխտականութենէ մը, միաժամանակ այն մեծ ռիսկը կմարմնաւորէ՝ զոր հայերու վերապրումի կամ գոյատեւման պայքարը պէտք է հարատեւօրէն դիմագրավէ. ռիսկը՝ հոգեկան իրականութենէ մը պատրանքի վերածվելու եւ պատրանքը իրականության հետ փոխանակելու։

Ամեն պարագայի, հարատեւ ճիգը վերստեղծելու նոր, հոգեկան իրականութիւն մը, փոխան կորսված ֆիզիքական իրականութեան, դյուցազներգակ դրոշմ մը կկրէ իր վրայ, հոն՝ ուր դյուցազներգութիւնը կմիանայ ողբերգութեան։ Մեզի այնպէս կթվի, թէ «դյուցազներգական ողբերգութիւնն» հըղացքը—երկու հղացքներն ալ իրենց թեքնիկ իմաստով ընդունելով—,գուցէ լավագույն ուղին կմատնանշէ բնորոշելու այն պայքարը, զոր ցեղասպանութեան ժառանգորդ հայ սերունդները պէտք է մղեն օրը օրին, հատկապէս սփյուռքային իրադրութիւններու մէջ, որպէսզի վերապրին իբր հայ։ Սակայն նման բնորոշում մը հետախուզումի նոր հանգրվան մը կբանայ, այն է՝ մշակելու իմաստաբանական ու գոյութենական խորագույն մակարդակի մը վրայ Հայոց ցեղասպանութեան, այսինքն Մեծ Եղեռնին, ողբերգական-դյուցազներգական տեսութիւնը։ Այստեղ թող արտոնվի մեզի միայն նշել, թէ հայ ոգիին իբր ամենեն արտահայտիչ գրական ստեղծագործութիւնը նկատված է Սուրբ Գրիգոր Նարեկացիի Մատեան Ողբերգութեանը: Նորագույն պրպտումներու համաձայն, այս գիրքը հայ ժողովուրդի բուն իսկ Մատեանը, կպատկանի ողբերգութեան սեռին, բառին հարազատ առումով[11]։ Նման հավաստում մը՝ կխորհինք թէ կարելի է ընել նաեւ անոր դյուցազներգական բնույթին նկատմամբ։ Պարզ զուգադիպութիւ՞ն է արդյոք, թէ հայ ոգիին ողբերգութիւնը է նաեւ անոր դյուցազներգութիւնը։

---

11 Տե՛ս Գ. Պըլտյան. Նարեկացի լեզուի սահմաններուն մէջ. Վենետիկ, 1985։